ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 24.06.2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 182-Ա

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴԻՊԼՈՄԸ (ՎԿԱՅԱԳԻՐԸ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴԻՊԼՈՄԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N 46-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման» կարգի 5-րդ և 43-րդ կետերի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի դիպլոմը (վկայագիրը) Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի դիպլոմին համապատասխանեցման համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահի 2014 թվականի ապրիլի 1-ի «Համապատասխանեցման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին» N 46-Ա կարգադրությունը:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
նախագահի 2024 թվականի հունիսի 24-ի N 182-Ա
հրամանի

Օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի դիպլոմը (վկայագիրը) Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի դիպլոմին համապատասխանեցման համար անհրաժեշտ փաստաթղթեր

1. դիմում՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի անունով,

2. համապատասխանեցման ենթակա դիպլոմը և դրա պատճենը (դիպլոմի բնօրինակը վերադարձվում է պատճենի հետ համեմատելուց հետո),

3. դիպլոմի՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,

4. բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը (դոկտորի գիտական աստճանի դեպքում՝ նաև թեկնածուի գիտական աստիճանի դիպլոմի պատճենը),

5. անձնական թերթիկ,

6. ատենախոսությունը (կամ դրա հավասարազորը), ինչպես նաև դրա էլեկտրոնային տարբերակը,

7. սեղմագիրը (առկայության դեպքում),

8. հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը,

9. անձնագրի պատճենը:

Ծանոթագրություն. սույն փաստաթղթերը դիմողը պետք է ներկայացնի մեկ օրինակից և գրանցվի Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պաշտոնական կայքում: